

## Հ. ԱՐՄԵՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ժ. — Երբ բելեան զօրքերը կապաններէն և խոխոմածիզ ծործորներէն խոյս տալով՝ կ'ուզէին թշնամիէն ազատուիլ, Մոսքեկան և կովկասի հաստաբազուկ հսկաներն բարձրաբերձ ժայռերու եզերքներէն անճոռնի անհեղեղ խոշոր քարեր կը նետէին անոնց վրայ, Փախուստն անկարելի էր, ամէն տեղ բռնած էին այն վիրազներն անդիմամարտ, կը թռչտային ջախջախ քարեր, կը վազէ ձորամէջէն վտակ վտակ արիւնը սին, կ'որոտայ բոմբին ճայթիւն հաչումն և հուշ վիրաւորեալներուն, Շատերն իսկոյն կը սատկին առանց ճիկ մը հանելու. թորգոմեանք անտարակոյս հոն եղածները կ'իմանային. ու ահա յանկարծակի կրճերու մէկ բերնէն ձիաթափ, դուրս կ'իյնար մրդիօրէն ահարկու սկայն թաքուղատ որ բարեկոնի աշտարակին առաջին քարն անկիւնակալ ինքը բերած դրած էր. ժայռերու սէզ հըսկաններէն հազիւ ազատած երազաթեւ թրուռներ պէս կը սլանայ, կարծելով ազատած է և փրկուած. և ահա մովկանեան գնդէն՝ փառոխ սկայազօր լայնալիճը լաբելով, զայն դիտապաստ կը փռէ:

«Գայր ընդ օդս յայնժամ սլացեալ հրեշտակն Հայոց սաւառնաթեւ.

Մուտ ի զրախտն և սօսափին թևոցն ընդ սիբ առաւօտին,

Հարկանէր ի լրսելիս յերեսս յոսկի հերս Աստղկան.

Դարձաւ ետես ըզՋուարթունն, ունկն երկնաւոր եզ պատգամաց:

«Սիրելեացդ անմահից, Աստղիկ, ի սէր կաս համակեալ,

Ասէ հրեշտակն, այլ զոցս հրաման անդարձ կընքեաց ըզբախտ.

Հաս՝ այլուր տարջիր ըզսէրդ. թորգոմեանք սրդուլք Հայկայ

Յաղթանակ պերճ կանգնեցին երէկ ի դաշտն Գընուրն,

Թըշնամին խաւարարնակ նախանձարեկ ոգւով այսոյ

Յարուցեալ յանդընդոց պըղտորէ զօդս և զծովուն խորս

Ընկըմէլ գնաւաց տորմիդն որ արդ ածէ զնոսա 'նդ ալիսա...

Արդ առ քեզ են հրամանք. այն իսկ է քեզ վիճակեալ բաշխ»...

Տեսանէ զտորմիդն Աստղիկ վայրավատին ցընդեալ ի ցիր,

Գողտը և ողոք բարբառով յարուցանէ սիբ ի թիկունս.

«Էջ սիբդ հեգիկ՝ ճեմեալ մեղմիկ ի լուսաճեմ վարագ լիբիդ»:

Թեւ պարզեալ նաւացն ետուն ի հողմն յաջող և խորշ առեալ

Բուրեալ՝ արշաւեցին ընդ ծաղկածին ալիս կապոյտ:

Փարատեալ մութն և արեւ ծաւալէր ջինջ ճաճանչազեղ.

Գտանէին նաւը զիրեարս համագումար ի մի ժողով

Դաջ ի բաց անցեալ ըստ Լիմն, ափանց հանդէպ խոռխոռունեաց...

Ըզթիկունս ընդ սարաւանդըն դարձուցեալ Բարկաշատայ,

Դէպ ուղիղ ծովէին յարեւմտից դիմեալ հարաւ

Ի կոր ափունս բըզնունեաց, այն որ ընդ թուխ և ընդ Դատուան...

Երկոցին վարզին տորմիդ ի հիւսիսոյ և հարաւոյ,

Պատահին բըզնունական ափին հանդէպ դէմ Աղաղայ:

Թակն արկեալ տիտանացուց ըզթորգոմեան նաւացն հանդէս,

Խըլըրտեալ ահ ցուրտ յերական, ի դէմս իւրեանց մածեալ դալուկն»:

Պատերազմը կը սկսին, բելեանք կ'իյնան նետահար, քարերու հեղեղ կը թօթափի Հայոց վրայ: Տիտանեան լաստեւուն կէսն կը փճանայ, և հայկեան բանակին յաղթանակը մեծ և սոսկալի կը հռչակուի:

ԺԱ. — Թորգոմեանները առտուն կա-

նույն պատահելով ալիքներուն փրփուրը, ճուխ ճնմելով կ'երթան ափունքը կ'ողջունեն կէտը աւազածիր, կոր ափերն կը հնչեն նաւատական աղաղակով. և այն ատեն որ թորգոմեանները դէպ ի ցամաք կը քաշուին, գաղտնածածուկ դարաննելով, մըրկատարափ նետածգութեամբ՝ թշնամին անոնց վրան կ'իջնէ, հայկեան բանակը սարսափած անակնկալ հարուածներէն կը հասկնայ վտանգին մեծութիւնը, և երկու բանակներէն տեղատարափ կը թռին նետերը. սակայն աւելի տիտանեաններէն կը մեռնին, Զորավարները թորգոմեան, կը խրախուսեն նաւերէն, կը կոռին գաղտնաբար, տիտանեան հսկաներէն բազմութիւնը ծովափ կ'աման դիտապաստ: Թորգոմեան Հայկ դիւցազն՝ գունդագունդ զօրքերով՝ վրայ կը հասնի, կը սկսի սարսափելի կոտորածը...

«Անդ էր յայնժամ նրկատել որպէս կըրկին բորբոքեալ բոց  
Թուփս ի մայրեաց թանձրախիտ վիշապաձայն յիրեար խառնեալ,  
Թերկոցունց կողմանց մըրցումն և գուպարած անպարտելի:  
Զի երկոցունց և աշխարհի բոլոր կողմանց քաջը անուանիք,  
Ճակատեալ զըտանէին դէմ ախոյեան ընդդէմ միմեանց»:

Արուսեակ և Հայկանոյշ արժանացած բլրին վրայ, կը դիտէին բանակներուն ընդհարումները դիտախորխտ. մտրակելով երիվասիկն կ'իջնեն լեռնէն. և Հայկեան զէնքերով՝ Հայոց օրիորդը շանսատակ գետին դիտապաստ կը թօթափէր թշնամին: Անմեկին էին Հրանտ և Հայկանոյշ, կողկողի և միասին կը հարուածէին թշնամիին զօրավարներն. սակայն այն մեծ մարտին մէջ Հայկ քաջաբար վէրք կ'առնէ:

ԺԲ. — Իսկ Բաւոն բժշկապետ՝ Ժիր ծերունին՝ Հայկայ քով կը դարմանէր դիւցազին վէրքը, լուալով և զննելով, կը տեսնէ նիզակին կտորն սրտախոց սպե-

ղանիով կ'օծէ վէրքը, և արգանակ խմելու հրաման կու տայ: Փարագունները մի առ մի այցելած էին և մեկնած էին քաջէն: Միայն Հայկանոյշ չէր հեռանար հօրը քովէն, գիրգ և գէր ճերմակ ձեռքով՝ անոր ցուրեր կը մեղմէր, լնթիքէն վերջ՝ հասնելով ճարտար Բաւոն ծերունին, կը ծրոք վէրքին վրայ, երկու ձեռքով կը տըրորէ անոր յաղթ անդամին թանձրամուրը, յետոյ սուր սուսերով վիրաբերանը կը պատէ, և քցանովը կ'աշխատի կորգել հանել ժանտ սլաքը: Բայց ի զուր, միւրեալ դեռ կը մնար երկաթը. այն ատեն դիւցազն ինքնին մատուրներով զայն իր վէրքէն դուրս կը խլէ:

«Մանաւազ և Արմենակ ընդ հօրեղբարսն դիւցազունս»

Միաշունչք ի մի խորհուրդ՝ բարեպատեհ վարկուցեալ ժամ

Կատարել ընդ վեհազին հօր զԱպահայ զմեծ հաշտութիւն,

Մուծին զնոսա ի խորանն, ուր ջահք և ճրագք բորբոքէին»:

ԺԳ. — Հայկանոյշ սրտատրոփ՝ փառնակի վրանը դիմելով՝ յանկարծ կը տեսնէ Հրանտ պատանին աւելի փաղփուռ գեղով. սիրտ բարախուն, ծունկ դողողուն, կը խօսէր կոյսը.

«Ալէկոծ մըտաց կուսին Հրանտ անգէտ և խնդալից,

Ձաջըն ընդ աջըն խառնեալ ձրգէր ի լանջսն սըրտաթունդ,

Եւ արեւակ զահեակըն գիրկս ըզվարտագեղ պարանոցան,

Ըսփոփէր. զըլխակոր կայր նըշմարէր կոյսըն գերկիր

Աս սիրոյն և առ խըղճի մըտացն ի գութ հօր յուզելոյ»:

Հայկանուշին կ'ըսէ Հրանտ. Պատեալազմի կ'երթամ ես, դու, սիրելիս, հօրդ դարձիր. ծնողքիդ ծոցը դարձիր: Զայն ըսելով, կը թռչի, կը ծածկուի լեռանց մէջ:

իսկ Հայկանուշ՝ չուզելով տարփելիէն բաժնուիլ. դէպ ուղիղ զինարարներ կ'երթայ, կ'առնէ կարևոր զէնքեր, ու ձիաթափ՝ կը վազէ իր հսկայախորոստ հօրը նման: Մարտագոռ ամբոխին մէջ, հայկեան զնդին կը հրամայէ Հայկանուշ՝ իր աշտէնը արձակելով, Շամիրեան բանակէն կ'իշնան անձեր, նոյնպէս դիտապատ կը խորտակի սոսկափթիթիար հսկայն Սային: Բանակներն ուժով իրար կը զարնուին, կը տիրէ խառնուրդ սոսկալի, զէնքի կոփուն և խորտակումն: Հայկանոյշ կը շամփրէ և կը կոփէ ոսթիւն զլուս: Տիտանեան գունդն ահաբեկ, փախուստ կու տայ: Շամիր սուսերամերկ՝ Հայկայ դստեր կը սպառնայ, Հայկանոյշ դաշտին վրայէն առնելով քար մ'ահագին, զնդակի պէս նշան կ'առնէ Շամիրին ճակատին, ան մէկ կողմ քաշուած ատեն, Նիւքարին հարուածը կ'երթայ, ան թաւալզոր կ'իշնայ գետին: Օրիորդը մինչդեռ ուրիշ քար մ'ալ կ'ուզէ նետել, Շամիր վրայ հասնելով, կոյսին մեծ հարուած մը կու տայ. ան ցնորած գետին կ'իշնայ: Շամիր անոր կ'ուղղէ այս խօսքերը. «Արիւժու մեք յորս էլաք, այլ արժեացէ զայն այս երինէն»: Հայկանուշ անդադադանալով որ հսկայն պակշտ աչքով կը զննէր իր անդամները գեղեցիկ, կ'ըսէ անոր «շատ մեծ շնորհք ինձի ըրած կ'ըլլատ եթէ հիմա զիս հոս սպաննես». ու գունատ՝ կը մարի ցուրտ քրտինքով կը փոփի: Չայն Նիւքարին ձիուն կապած կը հեռացնեն կը տանին: ԺԻ. — Շամիր զՀայկանոյշ կը հասցընէ բեկեան բլուրին ստորոտը, ու յանկարծ՝ աղաւնիի մնչին մը կը լսէ կոյսին անոյշ ջրթուէնքերէն. հսկայն իսկոյն կը վազէ դէպ ի վտակ, և սաղաւարտով ջուր կը բերէ, կը սրսկէ, կը ցողէ գով ջուրն կոյսին երեսին, և անոր մարմնոյն զրահին կապն ու ճարմանդը կը քակէ: Օրիորդը շունչ կը քաշէ և աչուրները կը բանայ. մտայոյզ, այլէկոծ սրտով խոկուն դիրք մը կ'առնէ: Տիտանեան բանակն ամբողջ, վրան առ վրան ձայն կու տան, լսելով յարգի աւարին մեծ լուրը. տեղեր-

նէն վեր կ'ելլեն Բէլ և իշխանները. համարելով որ այլ ևս յաղթած են քաջուն թեամբ: Ծաղկահասակ աղջիկներ՝ զՀայկանոյշ կը հանուեցնեն, լուգարանին մէջ կը լուան. կը հիւանան անոր զիրգ Հնաշխարհիկ անդամներուն վրայ, զարմացած՝ թէ ինչպէս այդ մարմնոյն մէջ այնպիսի առիւծի սիրտ կրնայ ըլլալ: Աստղիկի պէս կ'ելլէ ջրէն կը հագնի պարզ պարեգոտ մը: Գեղադէշ կոյսը թիւմիր զՀայկանոյշ կը սփոփէ. բայց Հայոց կոյսն աւելի կ'ուզէ մեռած թաղուած ըլլալ. շուշան այտերն կը կարմրին ծիրանածիլ վարդագեղ: Բէլ հրաման կ'ընէ որ Հայկանոյշը իր քով տանին. արքունական վրանին մէջ՝ ուր ինքը Բէլ, և մեծամեծներ և ծերաւորտը բազմած էին: Անթիւ ջահեր և լապտերներ վրանին զահլիճն կը լուսաւորեն: Պերճօրէն հագուած է ինք հսկայ Բէլը տիտանեան: Ամէն կողմ կը տեսնուին փաղփին շողշող ոսկի արծաթ. կու գան գեղադիտակ տրկիններ, նաժիշտներ բազմա-հոյլ, զՀայկանոյշ կը բերեն բոցանշոյլ ջահերով, իսկ թորգոմեան կոյսը ծաղկափելթիթի գեղապար, երամ երամ աղջկանց բոյլին մէջ կը փայլի արեւափառ. հանդիսական բազմամբոխը ազատագունդ՝ զայն տեսնելով, կ'երազեն ամենամեծ գեղեցկութիւնը համաշխարհի: Բէլ անոյշ խօսքերով՝ կ'ուզէ որսալ զՀայկանոյշ որ սակայն խորխտաբար անոր չուզեր հարս ըլլալ: Եւ մինչդեռ Հայկայ վրանին մէջ կը լսուի ջայլումներ և ողբ աղիողորմ, հոն կը հասնին պատգամաւորները Տիտանեան Բէլ դիւցազին, և կը ինդրեն որ յօժարին զՀայկանոյշ տալ Հարս Բէլի. ասով կըրնայ ազգաց մէջ հաստատել զօդ մը հաշտութեան, և կ'ըլլան ձեռնթափ այն մօտալուտ պատերազմէն. բնաւ չէղան համոզիչ այն կաթողին ամէն խօսքերն. Հայկ սրտաբեկ, իրը հայր և հայ դիւցազնաբար պատասխանեց.

«Եւ թէ դուստր է Հայկայ՝ թորգոմեան կոյսն իմ Հայկանոյշ,

Գիտաստեղծացեալ տալ քաջութեամբ  
ըզպարանոց  
Ներքոյվայ սրոյն՝ փոխանակ իւրում փա-  
ռաց՝ հօր, 'ւ աշխարհիս,  
Եւ ոչ այլ ինչ երբէք ընդ անձն իւր տալ  
անցուցանել,  
Ընդ անձն ասեմ, ընդ հոգին և ընդ մար-  
մին սուրբ կուսականն:

Դեռ պահները յուսահատ, Հայկին վրա-  
նէն կը մեկնին, իսկ Աստղիկ դրախտին  
մէջ կը թողու իր կուսագեղ տեսքն և կ'առ-  
նէ առնացի կերպարանք մը. զինուած կ'եր-  
թայ Հրանտին, անոր կ'ըսէ թէ Հայկա-  
նոյշ տակաւին ողջ է. Հրանտ և Աստղիկ  
ուրախութեամբ կ'երթան ազատելու Հայոց  
օրիորդն զՀայկանոյշ. իրենց հետ կը միա-  
նայ նաև վստամ քաջարին:

ԺԵ. — Աստղիկ գաղտնի՝ Հայկանու-  
շին վրանը կը մտնէ, կոյսին կը մօտե-  
նայ ու կը ձայնէ դաշն՝ Հայկանոյշ, և  
անոր կ'իմացընէ Հրանտին գալն. կոյսն  
աչուրենքն երկինք տնկած՝ պաղատագին  
կ'աղօթէ: Անպատում էր Հրանտին ու-  
րախութեամբ սրտաթուռնը. վստամեան իրմ-  
բէն Գոռ հովիտ հակայն կը շալակէ զՀայ-  
կանոյշ կը թռի մրրկաբար. նա ժիշտները՝  
սարսափելի ճիչ կը հանեն, և կիսաթուռն  
պահակները կանանց ձայնէն կ'արթնան,  
սակն արդէն Գոռ ազատ կը թողընէր իր  
բռն անգին: Բնական գործերն կը տես-  
նեն՝ Հրանտին և վստամի ջոկըրը, և հաշ  
կը սկսի մարտ սոսկալի, Աստղիկ գէնցե-  
րու շահուածն զարհուրած՝ խոյս կու տայ,  
Տիտանեան գնդէն Սուսառ կը պատահի  
Գոռայ, սա երկարօրէն կռուելէն վերջ կը  
մեռնի. Հայկանոյշ զարձեալ գերի կ'իյ-  
նայ բեկան բանակին մէջ. Հրանտ վրայ  
կը հասնի. վերագ Սուսառ կ'աղաղակէ որ  
Հրանտ ըլլայ անձնատուր. դիմադրելն ան-  
նարին էր: Հայկանոյշ և Հրանտ կ'ըլլան  
գերի բռնաւորին. ու երբ երկուքն ի միա-  
սին Բէյի առջև կը կանգնին, խորհուու-  
թեամբ կ'ընտրեն մեռնիլ, կ'արհամարհեն  
բռնաւորին սպառնալիքն ու Հայկանոյշ  
վարդաձիւն իր Հրանտին կը մրմնջէ. «Ո՛հ

եկ մեռցուք ի միասին միմեանց ի գիրկս.  
Այլում լինել քաւ յինէն, մինչև զըտից  
ըզքեզ յԱղէն»։ Ասոր վրայ կը բռնկի մար-  
դախոշոշ բռնաւորն. թամիր կոյս գեղե-  
ցիկ՝ իր հօր զայրուիթը կը մարէ: Հայկա-  
նոյշ Բէյին անդախորդստ հրամանովը կը  
բանտարկուի. և զՀրանտ կը սպանեն.  
Տիտանեան կոյսը թամիր՝ կը պաղատի,  
որ Հայկանոյշ կատարէ Բէյին կամըր,  
բայց ի զուր, չի խոնարհիւր Հայոց օրիոր-  
դը: Բէյ անոր պահապան կը հրամայէ դը-  
նել երկու հօգի՝ վախտանգ անուռով բը-  
նութեան վիժած և իր ջատուկը: Թորգո-  
մեանները մեծ սուգի մէջ են, անմխիթար  
Հայկ դիցազին երկինքէն կը հասնի Զուար-  
թուն մը, որ պաշտօն ունի Հայոց հօր  
ցոյց տալու թորգոմական փառքն ու պար-  
ծանք:

ԺԶ. — Հրեշտակ և Հայկ դիցազն  
ձեն ու ձեն կը վերանան դէպ ի երկինք  
ուր կը նկարուին արարչական և հայ-  
կական երկնային և ազգային պատկեր-  
ներ:

ԺԷ. — Հրեշտակապետը՝ անմահու-  
թեան դրախտը մտնելով, բժշկութեան դի-  
ցանոյշ Աստղիկին կ'ըսէ, որ երթայ դար-  
մանել Հայկին վէրքը: Կը հնազանդի Աստ-  
ղիկ կոյսն գեղանի, կը պատրաստէ ազգու  
գեղեր ու մերկանալով իր կերպարանքը  
կուսագեղ, կ'առնու ալեւոր բժշկապետ  
Թառնիին պատկերը, և հրեշտակն ալ ա-  
նոր արբանեակը կ'ըլլայ. երկուքն ի միա-  
սին՝ կ'երթան Հայկին վէրքն բուժելու.  
դիցազին կսկիծներն անդէն կը փարա-  
տին. Հայկ կայտառ և խնդագին կը վազէ  
իր գահոյցէն, գէնք կ'առնէ, կ'ուզէ փոր-  
ծել, թէ արդեօք ունի՞ իր նախկին ուժը:  
վստամ դառնալով մոլեկան արշաւանքէն,  
անոր ընդառաջ կ'ելլեն Փառնակ, Զա-  
րեհ, Առնակ և Արմենակ, կը հարցնեն  
թէ ո՞ւր են Գոռ, Հայկանոյշ և Հրանտ.  
և անոնցմէն մէկը չտեսնելով, կ'ար-  
տասուեն աղիորդմբ. վստամ շուարած,  
կ'ուզէ անձնատպան ըլլալ. Արմենակ  
զայն կ'ազատէ: Ու յետոյ մեծ պատրաս-  
տութեամբ, թորգոմեան անհղ բանակը

Բէլէն իր վրէժը կ'ուզէ առնել, Վստամ կը հաշտուի Հայկայ հետ, մեծ կ'ըլլայ ամբողջ հայկական բանականերուն ուրախութիւնը: Կ'ելլէ Հայկ վրանէն՝ կը դիմէ քաջամարտիկ բազմամբոխին:

«Այժմ, ասէ, համագունդ՝ բովանդակեալ բոլորեցաւ:

Միագումար միութիւն երկնախորախոյս մեծ բանակիս,

Լըբութիւն մարմնոյ զօդեալ ի մի զըլուի թորգոմական...

Երթիցուք միախումբ առ թըշնամին հասարակաց,

Ընթացուք արութեամբ, հայրենասէր լի նախանձու»:

Յետոյ կը մօտենան սուրբ բազինին՝ խնկարկելով կ'աղօթեն, և Մանիտոն աստուածաբալ քահանայն կ'աղերսէ որ Աստուծոյ թէն հովանի ըլլայ Հայոց: Այն ատեն Հայկայ հրեշտակը՝ արքայութեան ազամանդէ որմերէն կախուած համակ ոսկի զրահն կ'առնէ, կը հագուի և մէջքին կը կապէ սուրբ պսղովատիկ: Կ'առնէ նիզակ մը հաստ և լաւ մը գինուած, կը թռչի դէպ ի Հայկեան գոռ բանակը: Զէնքերը Հայկայ կը յանձնէ, կը պատուիրէ որ քաջարար յաղթանակէ, զի երկինքէն պիտի դիտեն Հայկեան սխրանքները: Կ'ըսէ ու անդրէն կը թռչի: Երկնապարգեւ զէնքն ու զրահ բոլորովին Հայկ դիցազին պաշտօնած էր: Թորգոմեան բանակները կը սկսին երգի բերան դողոյթ տալ: Եւ Բելեանները Բլբան ծայրէն գազանաբար կը սուրան, երկու կողմէն բանակները փոթորկելով կը մօտենան, իրար զարնուելով, կը տապալին հսկայ քաշեր: ԺԲ. — Զարհուրելի կոտորածէն վերջէ՝ բանակները կը սկսին ընթերցել քանակները: Զարհուրեալ, թորգոմեանները զուարթամիտ դաջութիւններն կը պատմեն: Եւ Բիւրասպ գազաշոտ՝ սուրբական ծանր սիրով վառուած, կը մօտենայ Հայկանուշին, ամէն ջանք կը թափէ և կ'ուզէ զայն իրեն որսալ, յափշտակել և դիւթական

զօրութեամբ խոյս տալ Բելին աշուրնեւրէն, ապրելով իր հեշտ զրգարանին մէջ: Հայկանոյ չի թողուր՝ որ այն շամբուշն իրեն դպչի. կախարդն այն ամօթէն շառագունած՝ կը զօփայ: Թամիր օրիորդը գեղեցիկ, լսելով որ Բէլ զՀայկանոյ պիտի մատնէ՝ գեղիս զօրքերու հանդերձ, իր հօր Բելայ ոտքն ինկած՝ արտասուագին կ'աղաչէ, որ ետ կենայ այդ մտքէն. կը կատարուի կամքն օրիորդին: Բիւրասպ՝ դարձեալ զՀայկանոյ կ'ուզէ փորձել, դիւթական գաւազանը ձեռքն առած, կ'երթայ վրանը գեղեցիկին: Հայկանոյ թալացած Հրանտի սիրով, կը քաշէր Հրեշտակի քուն, անուրջին մէջ կը տեսնէր իր խօսնաայն Հրանտ. վաղազրաւ տարփելին խօսած ատեն, կը հասնի մոլին Բիւրասպ, յոտն ի մատն կը մտնէ կոյսին վրանը. կը լսէր որ կոյսը Հրանտին կը գրագտէր Բիւրասպին վրայ. ժանտ հետապնդողը իր դիւթական գաւազանով կը փոխուի կ'առնէ Հրանտին ամբողջական կերպարանքը: Աջագեղ կոյս օրիորդն արթննալով երազէն, աչքին դիմաց կը տեսնէր նոյն ինքն զՀրանտ անըջական. հիացումը մեծ էր Հայկանուշին, կերպարանեալ Հրանտը կ'ըսէ. «Հայկանոյ զլուսիս կ'ուզես համբուրել քեզ աւելին կը շնորհեմ, յագնանք գէթ գրկուելով»:

Այսպէս կ'ըսէ և կ'ուզէ գրկել կոյսը. «Սակայն, ասէ, Սակայն զայդ մինչ կենդանիս ոչ յանդրգնէր ընդ իս Հրանտ. Այլ աղէ գամ մի զայս աստ. հիմ այս յանմահ կայենիցն եկք»:

Եւ ոգին կը համոզէ որ Հայկանոյ Բէլէն փախչի մտիկ ընէ Բիւրասպի և ազատիչար գազանէն: Հայկանոյ ալանջներն երկու ձեռքով կը զօցէ և կ'ըսէ. «Դու Հրանտն ես, դիւթական խօսքերու մէջ կը պահուրտի Բիւրասպը վիշապ»:

Ու կախարդը ցնորական կը գարշիս, դիւկս եկուր սիրատենչակ օրիորդ, եկուր զքեզ փախցնեմ, անմահութեան մէջ ապրինք. ու մօգական զօրութեամբ կուսին կապանքը կը լուծուին. և մոլին զայն գրկելով, կը սկսի շամբեալ զոգաւ. օրիորդին ամբնոյն մէջ

կը սողոսկի սարսուռ, դէպ ի երկինք աչուրները բարձրացուցած, իր հօր՝ Հայկայ Աստուածէն, կը հայցէ օգնութիւն. հսկա-յաբար վերագին ձեռքէն ազատած, զայն կը զլորէ առեւծաբար. Բիւրասպ կ'առնէ երկայն օծի կերպարանք. կը գալարի, կը սողայ ոլորուելով կը քծնի, կ'ուզէ փա-րիւ Հայկանուշին զարշապարին. Հայկա-նոյշ տէգ մ'առած կ'ուզէ վարսել անոր կոկորդը: Հոն Բիւրասպ վիշապացած՝ Թա-թերուն վրայ կը կանգնի, կը բանայ եր-կու թեւերն աչք եւ որկորն արեւնը ուշտ, բոց շէկով, կոյսին երեսն ի վեր՝ ետ ետ կը վերջոտնէ: Վրանին փեղկէն դուրս կ'իլլէ, կ'առնէ իր առաջուան կերպա-բանքն: Եւ յետոյ դժոխային խարոյկին վրայ կ'այրին Հրանտ եւ ուրիշ երիտա-սարդ գերիներ: Հայկանուշին գլխին վրայ դահիճն ալ սուրը բռնած՝ կ'ուզէ զայն խորխորդել եւ ահա Աստղիկ հրեշտակներով կը հասնի եւ կ'ազատէ զՀայկանոյշ եւ զայն իր Հօր բանակը կը հասցնէ:

ԺԹ. — Դժոխքի ոգիներ եւ Զուարթ-նոց երկնային խումբը օգնութեան կը հաս-նին. դիւանականքը՝ Բելեան գնդին եւ երկ-նայիններն ալ՝ հայ զօրքերուն: Մէկ կող-մէն կը հնչէ վաճանը Հայկեան որոտա-ձայն, անդին Բելեան փողն կ'որոտայ, երկու կողմէն հրաշունչ բարկութեամբ պա-տերազմի պատրաստ են: Արիական մար-տիկներ հսկայախրոխտ քաջութեամբ կը բաղխին, անոնց ազդակն մինչեւ երկինք կը հասնի. ու արեւի ճապաղիքը երկու կողմէն կը հօսի, Տիտանեան դիւցազը դի-սանոցէն նկատելով իր բանակին խեղճու-թիւնը, գոռալով օգնութեան կը հասնի. սակայն աչքն ուր որ դարձնէր Հայկեան զէնքի արարատեան հարուածներու ահեղ սարսուռը կը տեսնէր. կը վարանէր կը տատամսէր Բէլ, չէր գիտեր ընելիքը: Եր-կու հսկաներն իրար կ'ուզէն հանդիպիլ: Կայէն, Քամ, Յարեթ, Սեմ՝ մարտի դաշ-տին վրայ են, կը զարնեն կը զարնուին, երկինք, աստան կ'օգնեն իրենց: Ու Աս-տուած կ'արշաւէ ահեղախրոխտ բանակով,

կու գայ տեսնալու Հայ հսկային քաջու-թիւնները:

«Միջաբեկ քամակակոր եւ ոռնածայն վա-յոց ճըշիւք

Սուռնարայ իշխան մահուն եւ բելիար,

Ի լերինսն սրանային ի Մամրուտայ եւ Գրբգուտայ:

Զհետ պընդեալ հասանն երկնախրախոյս յաղթօղ բանակը,

Ընդ հրաշունչ եւ բոցավառ բերան բոր-բոց խորխորատից

Մըղեալ հոսն ըզնոսին ի դըժոխոց սան-դարամետս.

Անմահին զօրապատն առ կոռնան անկեալ նիզակաճած,

Ճեպեալ զնոսա տաքնապէր արիագունդ իւր պարմանեօր:

Տեսեալ զի ստուար բանակին նեղին ան-ձուկ խորոցըն ծոցը

Որ ահագին պատամանց լայնածիր ճա-խըն փեռեկմամբ

Ոչ բաւեն տակաւին անդընդասոյզ կլանել ըզնա,

Ի տէգ հզոր գեղարդանն՝ որ ի ձեռին՝ բարեալ գերկիր,

Փոսացոյց վիրապ մի վիհ անդնդախոր եւ անյատակ,

Դարահոս եւ գլխիվայր անդր գնոսա թո-թափելով:

Եւ հարեալ ոտնատրոփ աստուածազօր ա-ռոյզ բարձիւք՝

Թաւալ տըւեալ տապալէ լերինս ըզհետ նոցա զլեւամբը,

Եւ ի սպառ բոցաշունչ խընու զորկորըս դժոխոց,

Շիջուցեալ եւ զրգգայեալ հուրն եւ ըզ-ծուի անդընդային

Աղբերաբուղի վրտակօք ծովացելովք ցարդ ի Գրբգուտ»:

Ու Մասեաց զազաթէն հզօր Աստուածը Հայկեան գնդին, արդարներու հոգին առած՝ աւագափող շեփորներով կը վերա-նայ դէպ ի երկինք գեղեցկանազ պեր-

ճանցով, Եւ երկու կողմէն, զարձեալ հըս-  
կաները վիշապաձայն որոտալով իրարու  
հետ գազանաբար մը կռուին սովալլուկ  
գայլերու պէս:

Ի. — Սակայն ամենազօր զօրութեան  
բանակը բոցանելով, գերդ հրեղէն գետ մը  
կ'իջնէ կապուտողի կողմէնէն, սաւառնա-  
թեւ կ'ընթանայ հրապարիակ շրջապա-  
րոյր և կը պատէ Հայոց բանակն ամրա-  
կուտ, և վեր երկինք գունդ առ գունդ հրեշ-  
տակներ՝ ջահեր վառած, Հայկեաններու  
գլխին վրայ կը հակեն: Փողաճար հրեշ-  
տակներ աստուածազօր բանակին մարտի  
հրաւէր կը կարդան որոտալով իրենց ա-  
ւագափողը, Ու դիւցազին վահան հնչե-  
լով, կը պատասխանէ հրեշտակներուն թէ  
պատրաստ են պատերազմի. ճամբարն ամ-  
բողջ կը դղրդի. Հայկ Յուսկին վրայ կը  
նետուի, բանակն առաջ կը դրդէ: Երկու  
բանակներն իրարու կը մօտենան, կը զար-  
նուին. կտրիճներ անդամալայող՝ կը կոր-  
ծանին, կ'իյնան գետին: Երկնային հրա-  
մանով՝ Մահը կ'ելլէ երկրիս խորէն՝ սե-  
ւորակ գիշերադետես, ձեռքը բռնած մեծ գե-  
լուանդին և նիզակ մը, ձին կը մղէ Հայկ  
դիւցազի առջևէն: Բէլ տեսնելով Մահը,  
ակն յայտնի կը սկսի երազել իր օրհա-  
սին մօտ ըլլալը: Մահը շարժելով գեղար-  
դը մեծ, կ'ուզէ հնձել բելին հոգին, մա-  
հուան ականջին երկինքէն կը հասնի ձայն  
մը որ կ'ըսէր. «Մի դու գայդ մի, այլում  
պահեալ» իսկ դիւցազը Հայկ՝ այն ատեն  
աշուղներն դէպ ի երկինք բարձրացուցած  
օգնութիւն կը խնդրէ, ու չի թողուր, որ  
բելայ վրայ ուրիշ մը ձեռք վերցնէ, հըս-  
կայաքայլ՝ բռնաւոր ամբարշտտին դէմը  
կ'ելլէ, անոր սրտին շեշտակի կը թոցը-  
նէ Հայաստանի փրկութեան նետը շահող.  
և վերագը կը փշի, կը թնդայ՝ գունտը  
հողազանգուած: Հրեշտակներն ծափ կը  
զարնեն և Աստուած վերէն կը ժպտի:

\*  
\*\*

Ստուերագիր մը, մէկ մէկ դրուագներէն  
խտացուցի այս էջերուն մէջ: «Հայկ դիւ-

ցազն» ի բազմութեան պատկերներուն քո-  
վանդակութիւնը ամբողջովին՝ կարելի է  
տեսնել, և հետագօտել ու ըմբռնել անոնց  
զրական և գեղեցկագիտական արժէքը, ե-  
թէ քննադատ մտքով կարդանք այդ գոր-  
ծը: Պատասխանները զոր յիշատակած եմ,  
զաղափար մը կարող էն տալ այն դիւ-  
ցազներգութեան ամբողջական զանգուա-  
ծին վրայ, Գերթումը իր համապարփակ  
բովանդակութեամբ՝ հոյակապ արտա-  
դրութիւն մընէ, զրական Մասիս մըն է,  
պատկառելի, նուիրական աւարիանման:

Դիւցազներգուն՝ Հ. Արսէն Բագրատու-  
նի, եթէ իր դասական թարգմանութիւն-  
ներով անմահացած չըլլար. «Հայկ»-ը  
միայն բաւական էր յաւերժացնելու իր  
զրական փառքը: Ահա մտքի մշակ մը,  
որ զանազան երկերովը՝ կը շուարեցնէ  
ընտրելու և որոշելու իր գլուխ գործոցը.  
դասական թարգմանութիւնները (Հովսէփի,  
Վիրգիլիոսի, Միլտոնի, և այլն) «Չար-  
գացելոց քերականութիւնը» և «Հայկ դիւ-  
ցազը» եռադէմ բրդեմայ մը կը կազմեն,  
որ մեր զրական երկխոյոյթին մէջ, քնա-  
ւածիփոփեր իր երկխոյեղ շողերն աւ ցոյ-  
ցեն: Սակայն այդ զրական երոգութե-  
նէն՝ միայն «Հայկն» է գեղեցկագիտական  
յուշարձանը Բագրատունի մտքին: Որով  
նոյն իսկ միայն զայն քննելով, կարելի  
կ'ըլլայ վերլուծելու դիւցազներգութեան  
հանճարին արժանիքը:

Գրականօրէն ինչ որ կը պահանջուի  
պատմական կամ դիւցազնական բանաս-  
տեղծութենէ մը, զրեթէ ամենայն մասամբ  
կը տեսնուին Հայկ դիւցազներգութեան  
մէջ: Հ. Բագրատունին սնանելով ուռնա-  
նալով միայն յոյն և լատին դասական-  
ներու գործերով, ուսումնասիրած է դիւ-  
ցազներգութեան դժուար արուեստը, դա-  
սական հեղինակի մը ամբողջական կա-  
տարելութիւնը չի ներկայացրեր, սակայն  
կրնա՞ւ ըսել, որ անոնց ամենուն գեղեց-  
կին ցոլցերուն համեստ խտացուցիչն է ե-  
ղած իր դիւցազներգութեան մէջ:

Եւթը մէկ է, Հայ նահապետական քա-  
ղաքործութիւնը է որ ինքը կ'երգէ, ամ-

բողջական նիւթ. առաջինէն մինչև քսան. ներորդ դրուագը, կը տեսնենք պատմական նկարագրութեան շարունակութիւն, վէպը անխզելի, կապակցեալ. նոյն իսկ հովուներգական պատկերները և վստամի ու Սպահի պատմութիւնն մեծ դիւցազին քաջագործութեանց հետ՝ թէժ է հական մաս մը չի կազմեն, սակայն վիպասանութեան զանգուածէն անջատ չեն մնար: Քերթողը այդ պատկերներով, ներդաշնակութիւն մը տուած է ընդհանուր դիւցազներգութեան, և վէպը ազատած է միօրինակութեան տաղտկալի թերութիւնէն:

Հայրենի պատմութեան ամենէն մեծ դէպքերէն մէկն է որ արժանացած է բամբուկաբուրդի, մեզի համար հետաքրքրական է այդ և մեր զգացմունքի տաճարին մէջ այն դէպքը տապանակ մ'ունի, որուն վրայ կը սաւառնին հայրենասիրական և ազգասիրական ոգիներն: Հայկ դիւցազի Տիտանեան Բէլը՝ դիտապաստ ընելը, մեր վիպասանական քաջագործութեան ամենէն մեծ պարծանքն է, այն է հայկական փառքի ու ոսկեաւառ փաղփիւն առաջին էջն. խորենացին Մովսէս մէկ քանի տող կը նուրբէ այդ մեծ քաջագործութեան, իսկ Բագրատունին Հ. Արսէն 604 էջերու մէջ կ'ընդլայնէ և կը բիրեղացնէ զայն՝ քրնարին հրապոյրով և սրինգին սրտագրաւ մոգականութեամբը: Հայկ դիւցազի քաջագործութիւնը, աւանդապաշտ հայրենասիրին համար՝ պատմական ճշմարտութիւն մըն է, իսկ քննասէր ազգասիրի որ հասնար, հերոսական դարու առասպելախառն վիպասանութիւն մը, սակայն ինչ որ ալ ըլլայ, իրը մեծ է, դէպքը պատմականօրէն հոյակապ, և երևակայութիւնը զայն դիտաւելի առասպելական կը ներկայացընէ: Երկու մահաանցու դիւցազներ չեն որ կը մենամարտին առանձին, կամ իրենց անհղախորիտ բանակներով, այլ երկինք և սանդարամետ կը բացուին ու անհրելով բանակներ՝ Աստղիկ մը ու Սատան վիշապ մը, օգնութեան կը հասնին հերոսական սխրագործութեանց: Տիտանեան Բէլէն տիեզերք կը դղրդի. ան

երկրիս աստուածն է, իրեն զինակցած են տարտարոսի պետերուն բանակներն, հետոս մը վերջապէս, որ կը կոտի երկնքի շանթերուն հետ. Հայկ աստուածապաշտ է խաղաղասէր, բարեհամբոյր, սակայն նահապետական տուն մը պաշտպանելու համար, դիւցազ մըն է ու խորիստ դիւաշունչ Բէլի մը սոսկավիթխար ուժին կը դիմադրէ, վասն զի հրեշտակ մը քրկինքէն կը բերէ անոր կը յանձնէ հրաշագործ զէնքեր, որոնց հարուածներուն տակ կը խորտակին վարազախորիտ զազանաքած գունդեր, ու կը փլչի վիշապածնունդ Բէլը Տիտանեան: Ուրեմն՝ Բագրատունի դիւցազներգութեան նիւթը, թէ՛ մեծ է, և թէ լաւ մեծցած: Եւ այս էական պահանջ մըն է վիպասանական մեծ քերթուածին, որուն հաւատարիմ գտնուած է դիւցազներգուն:

Նիւթը կամ երգուած դէպքը, խորենացիին համեմատ, զուտ ճշմարտութիւն մըն է. որով քմածին հերոսի մը քաջութիւնը չէ որ կ'երգէ քերթողը, թէժն անհաւատալի սիրաբանութիւն մը նկատուի քաջութիւնը: Գարծեալ գիտնալու ենք որ, այդ հայ դիւցազներգութեան մէջ, պատմական ճշմարտութեան կամ հաւանական եղելութեան կմախքին՝ զգեցուցած պատահարներ, վիպական մտքի երեւակայութեան ծնունդ են մեծ մասամբ. սակայն ատոնք ընդհանրապէս հաւանականութիւնէ հեռու քաջագործութիւններ չեն. քերթողը վիպասանութեան ընդլայնումին համար՝ միշտ շրջներու դիմեր է, ատոնք էական նիւթէն զուրս են, սակայն միշտ նպատակներ ու նիւս. որ է վստմացնել դիւցազին պատմութիւնը, և դիւցազներգութեան՝ քերթողական հետաքրքրութիւն մը և հրապոյր մը տալ, պնենել, շարաւել վիպական հոգին և արդէն առանց այդ հաւանական դէպքերու և յաւելուածներու, դիւցազներգութիւնը ինքնին իր չոր ճշմարտութեան մէջ մնալով, մեծղի անպաճոյճ մահաբաժան մը պիտի համարուէր:

Դիւցազնական դարը՝ ոչ միայն հերոսական ուժով հրաշագործ երեցած է, այլ

նաև գերբնական զօրութիւնները օգնութեան կը հասնին, և դիւցազնեբզութիւնը կը տեսնենք որ կը պարունակէ հրաշագործ ողբիներ, նոյն իսկ մահականացաւ հետո՛ւ՝ առապելական ուժով օծուած, հիացում ու զարհուրանք կ'ազդէ։ Հ. Բագրատունին այն ամէն Հոմերական դասակարգի դիւցազնեբզութիւնները, կ'ապաւինի երկնառաք և դիւական գերբնականներուն, երբ պատմական հերոսին ուժը չի բաւեր հրաշագործելու, երբ վիպասանական դէպքերը և արկածները լուծուելու համար, կարևոր կ'ըլլայ հրաշագործ ուժը։ Արկածաւ Տէլէմաքին Մենտորն է Աթենաս, Հայկին և Հայկանուշին՝ Աստղիկ աղենական յաւերժահարան պարկեշտագեղ։ Կը տեսնենք Հայկանուշը առասպելական ուժով հրաշագործ, ան պատերազմի գուժարտակներու գուպարին մէջ՝ գլուխներ կը հնձէ. սակայն վերջապէս՝ տիտանեան զենեանխորոխտ բանակէն կարանաւոր՝ կ'իյնայ իէլի և Բիւրասպի ճիւղաններուն մէջ. ազատամար անկարելի է. նոյն իսկ Գոռ հսկան, թէև կը յաջողի պահ մը ազատել զայն, սակայն դարձեալ կոյսը կը ձերբակալուի, ու ալ ևս անհնարին է անոր փրկութիւնը. սուրը կը շողայ, քիչ աւելնէ կոյսը պիտի նահատակուի, և ահա Աստղիկ կը հասնի, կ'ազատէ զայն, ու կը թոցնէ իր Հօր Հայկայ վրանը։ Թորագոմեան բանակներն շատ անգամ՝ պատեւրազմի դաշտին վրայ՝ տիտանեան զօրքերու դիակներ կը փռեն. և իրենց գունդերէն զօրք մը չիյնար, վասնզի՝ Հայոց Հրեշտակը, իր բարձրադէտ լեռնէն՝ կը թռչի և իր ամբակուռ գահաբազայտ ահեղ վահանով՝ զանոնք կը պատսպարէ։ Առասպելական քաջագործութիւն կ'ունենան նաև քերթողին հերոսներն։ Խոշոր ժոյղ մը զոր աշխման քսան մարդ չեն կրնար գետնէն վերցընել, մեր Հայկ դիւցազը զայն մէկ ձեռքով կը նետէ Յուդադանի գնդին վրայ, ու գետին կ'իյնան քսան մարդ դիւթաւալ շանատաւակ<sup>1</sup>։

Հայկ դիւցազներգութիւնը ինքնին կրօնական վրէժխնդրութեան սրինգն է։ Հայոց

Հայրը չուգեր ստորանալ երկրպագութիւն ընել Բելայ և անոր աստուածներուն։ Հայկ իր Նահապետներուն Աստուածը կը ճանչնայ և անոր փառքին նախանձախնձ դիմէ։ Կ'արհամարէ Տիտանեան երկրադողորդ Բելայ ամէն գեղեցիկ խոստովները, կ'արհամարէ անոր ստեղծութիւնը պատեւազմական պատրաստութիւնը, ու վառուած կրօնական աստուածաբաւ կրակով՝ կ'ապաւինի Աստուծոյ, և Երկինք կը վարձաորէ զՀայկ։ Աստուած՝ սերովբէները, հրեշտակներու բանակները օգնութեան կը հասնին, Միւնոյն կրօնական կրակը կը տեսնուի Տիտանեան Բելայ մէջ։ Բիւրասպ իր սանդարմետի ճիւղներով կը մղէ զԲէլ, կործանելու աստուածապաշտ Հայկը, և թէև Բէլայ նիւթական ուժը բաւական է բնաջինջ ընել Հայկայ տունը և սերունդը, և սակայն դժոխքը կը զգայուէ սատանաներու բազմաբոխ մը, ասոնք ալ կը պատերազմին Հայկական բանակին հայ և երկայնի զօրքերուն դէմ։ Դիւցազներգուն իր քերթուածին կատարելութեան համար՝ կրօնական մոլեռանդութիւն մը արծարծած է երկու հակառակ պետերու և բանակներուն մէջ, Հայկ, Մանիտոն և միւս նահապետները՝ միշտ կը յիշեն զԱստուած և անոր զօրքերը, անոր հրաշքները, քաջագործութիւններն, և բանակը կ'ոգեւորի կրօնական զգացմունքով, Բիւրասպ նոյնպէս միշտ իր դիւական խմբին ուժը կը զրուատէ։ Հ. Արսէն Բագրատունին՝ յայտնաւորէ զոյց տալու իր աստուածարանական և դիցարանական հմտութիւնը։ Դ. Դրուագը երաշխաւոր կ'ըլլայ քերթողին կրօնական հմտութեան, իմաստասիրական պատճառաբանութեամբ՝ Թորագոմեանները և Տիտանեանները կը գովաբանեն իրենց կրօնը։ Մանրամասնորէն կը յիշուի Աստուծոյ և Աստուածներու գերբնա-

1. Նման աւանդութիւն մըն ալ կը հաղորդէ Սրտանձ տեանց իր Գորոյ ու Բրոցի մէջ. «Արտամետու Ծածկոր բաւած աշտոյն ապառաժը, զոր Դամբաժ իւր ծածկուր կապեր, և վնաս Բիւրգէն պարսխաթ պէս նետեր է մընէ հան», 107

կան հրաշալիքներն, Վիպասանական ճեթ-թողէն այսպիսի դրուագ մը պահանջ մըն է զոր յարգած է նաև Միլտոն իր «Դրախտ կորուսեալ»-ին մէջ. ուրիշ խնդիր է որ, Բագրատունին իր այդ դրուագին մեծ հրապոյր տուած չէ, և ընդհակառակն տաղտկալի ալ համարուած, սակայն պէտք է նկատել որ, իմաստասիրական և կրօնական ծանր նիւթ մը, քերթողական թիթեկ հաճողէն միշտ զրկուած է: Այս դրուագը կարեւոր էր իրրեկ դիւցազնեղբայական պահանջ, սակայն աւելի հակիրճ կարելի էր ըլլալ:

Հայրենասիրութեան բոցը նշմարելի է Բագրատունիի հայրենատրոյի կուրծքին տակ: Անտարակոյս զուտ կրօնական տեսակէտով չէ որ Հայկ կ'ապստամբի թեպէտ ղէմ. կայ հայրենիք 'ը, թորգոմնան սերունդի մեծ տունը, որ հայոց Հայաստանը պիտի ըլլայ. հայ նահապետական քաջագործութիւնը զայն սեփականութիւն մ'ըրած էր, անոր բարգաւաճումին պիտի պարապէին Հայկ և իր զաւակները: Այդ նախանշաններովիւն ինքնին կը յղանար Հայրենասիրութիւն: Բագրատունին մեզի իր Հայկով ցոյց տուած է դիւցազ մը, որ ամէն բան աչք առած է « առ սէր երկնից և հայրենեաց », Հայկ կ'ուզէ պատերազմիլ « Եւ մի զաշխարհ մեր ի կոխ մոլի պրդոյն տալ սրմրակաց »: — Արմենակ դիւցազին անդրանիկ որդին՝ մեր հովաստն հովիտներու, քլուրներու և լուսանեմ սարերու համար կ'ըսէ.

« Հայրենի աշխարհ է սա մեր սեփական և սիրելի.

Որդիքըս թորգոմնան, յարեթածին զարմ և զաւակ,

Մեռանիմք մշտադիր ի ձիննդէն վերայ լերանցս...», և դիւցազը կ'ըսէ, խընդութիւն է և զրգանք, Նահատակել ի վերայ վրիժուէն երկնից և հայրենեաց: Բագրատունին իր դիւցազնեղբայական մէջ հայրենասիրութիւն ցոյց տուած է. իր հերոսներն փոխանակ գոհանալու հայրենա-

սիրական ճոռոմ քարոզներու, նիգալի և սայրասուր սուրի ծայրերով զործեր են, զանոնք մահուան մղողը եղած է վեհանձն և անձնանութրական հայրենասիրութեան կրակը: Եւ այդ կրակը ոչ միայն քաջակորով այրերու կամ կտրիճ պարմանեւ ըլլա երակներուն մէջ վառած է, այլ նաև հայկագուն օրորդին Հայկանուշին փափուկ սրտին մէջ, որով այրական սպառազնեցով մղած է իր օգապարիկ երկվարը ու կռուներ է և իր քաջագործութիւններով զարմացուցեր է տիտանեան հսկայագունդ քաջերը: Մանենք հովուերգական յարկի մը տակ, հոն ևս կը տրոփէ հայրենասիրութիւնը. Դանան այն ինչ խանդոտ հայրենասիրութեամբ կը թողու իր յաւերժական սիրուն նախանձելի հովուական հանգստութիւնը, ու իր դիւցազին սիրով բռնկած, կը նետուի արինի դաշտը, և ինչ կատաղի և առաքինի քաջութեամբ կը պատերազմի: Հ. Բագրատունին՝ հայրենասիրութիւնը խօսքով քարոզած է այնքան, որչափ կը պահանջէր դիւցազնական դարը: Մենք ըսինք որ դիւցազի մը էական քաջութիւնը երգուելու տանն, կարեւոր է հաւանական ղէպքեր ստեղծել, և անոնցմով զարդարել քերթուածը: Սակայն այս պարագային Հ. Բագրատունին շեղած է դիւցազնեղբայական կանոնէն. իր իւրեցազին պատմութիւնը հակիրճ և յաջմանակի ղէպք մը, պատմութիւն մըն է պարզ, քաջութիւն մըն է դիւցազնական. ըստ զրական կամ վիպասանական կանոնի, պէտք էր որ նիւթին մեծութեան համապատասխան ըլլար դիւցազնեղբայական երկայնութիւնը: Հ. Բագրատունի առանց վնասելու իր դիւցազնեղբայական գեղարուեստին, կարող էր տաւր կամ աւելի թիչ զորուգներու մէջ պատմել ու երգել Հայկին քաջագործութիւնը, առանց զանց ընելու նաեւ յաւելուածական վիպասանական կարեւոր դրուագներն: Շատ ընդարձակուած ու ճապող կը գտնեմ վստամի ինքնուրոյն բանականերով Հայկէն անշատ ընդվզեալ պատերազմներու նկարագրութիւններն. աւելորդ խճողում կը նկատեմ

Ապահի ապարանքի գեղեցիկ նկարագրու-  
թիւնը, այսպէս ժ.Բ. դրուագի հովուեր-  
գական քարանձաւի պատկերը, որքան և  
հրապուրիչ, սակայն կարեւոր չէ, քանի  
որ այդ միենոյն գեղեցկագիտական հա-  
ճոյքը կը պատճառէ նաև Դանանի հո-  
վուերգական սրտազբաւ պատկերը: Աւե-  
լորդ են նաև ուրիշ մէկ քանի նախնական  
անշահ պատերազմներ, միշտ հանդիսատես  
կ'ըլլանք գումարտակներու համանման ա-  
րիւնահեղ տեսարաններու, վարագացած  
մարտիկներու եռ ու զեռ կառաղութեանց:  
Անշահ բարդութիւն կը համարիմ ժ.Չ  
դրուագը ուր կը պատկերին արարչագոր-  
ծութիւնը և մեր հայկական պատմութիւնը,  
և շատ համեստ գոյներով: Ասոր նման  
բարդութիւններ ունին նաև ուրիշ դասա-  
կան դիւցազներգութիւններ, սակայն ինչ որ  
էական գեղեցկութիւններ կը կազմեն ա-  
նոնք անոնց քերթուածներուն մէջ, հոս  
բոլորովին աւելորդութիւններ են, անոնց  
նիւթը կը պահանջէ զանոնք անհրաժեշտ  
երգել և յիշատակել: Չոր օրինակ «Դրախտ  
կորուսեալի» մէջ՝ Միլտոն ստիպուած է  
նկարագրել արարչագործութիւնը, վասն  
զի ան դրախտի պատմութիւնը կ'ընէ, որ  
կապակցութիւն ունի նիւթին հետ: Հայկ  
պիտի ըսենք՝ Հայոց պատմութեան հետ  
կապակցութիւն ունի, քայց այն պատմու-  
թիւնը, որուն ժամանակակից չէ Հայկ դիւ-  
ցազն, ինչո՞ւ մարգարէութեամբ յիշատա-  
կել, և այնպիսի ցուրտ ոճով, որ փնտսէ  
ընդհանուր դիւցազներգութեան գեղեցիկ  
դրուագներուն կրակոտ ոգւոյն:

Դրուագները առհասարակ շատ երկա-  
րապատում են, ընդհանուր իրիականը Հո-  
մերը ամբողջութեամբ է քսանըջորս համառօտ  
երգերու մէջ, և կը պարունակէ 454 էջ,  
իսկ Հայկ դիւցազն 604 էջ: Նիւթի եր-  
կարութիւնը փոյթ էջը, եթէ դիւցազներ-

գութեան ամբողջութեան չի փնտսէին  
ձանձրացուցիչ անպէտ յաւելումները:

Ըստ իս՝ թերութիւն մ'է նաև շատ մը  
դրուագներ առաւօտի նկարագրութիւնով  
սկսիլն: Հոմեր իր իլիականին քսանըջորս  
երգերէն՝ միայն երեք երգերն առաւօտով  
կը սկսի, և այն մէկ տող նկարագրու-  
թեամբ. իսկ Հ. Բագրատունի, իր քսան  
երգերէն չորսը արևով կը սկսի շուայելով  
վարդամատն, վարդակարմիր ծիրանի ճա-  
ռագայթներու գոյեր. կ'ըսէ Հոմեր «Ա-  
ռաւօտըն քրքրեմագգեստ տիեզերաց սրբոէր  
յուրբոս» — մէկ տողով կը գոհանայ Հո-  
մեր. իսկ Բագրատունին կ'երգէ.

«Բլլերանցն ապահունեաց լուսինն ի մուտս  
անցեալ զգլխովը,  
Խորխոսածայն աւետէին զկենդանարար  
լոյսն հաւախօցը».

Ճընճղուկը և հաւը զարթուցեալ ճըռու-  
ղէին յիւրեանց լեզուս՝

Ողջունել ըզգալուստ քրքրեմահանդերձ Ա-  
ռաւօտուն,

Եւ արտոյտ անձկակարօտ յակնապարար  
լոյս ալգածին

Երգ ի բերան քաղցրաբարբառ թողեալ  
ըզգաշտ արփաթեւէր:

Կափուցեալ զաշտ աստեղաց ի ճաճանչից  
արեգական,

Լուսաբերըն սիրալիր մեծապայծառ զը-  
ւարթ ալամբն

Հայէր միայն տակաւին յարեւելից պա-  
սըշգամբէն »:

Բանաստեղծութիւն կամ մանասանդ  
քնարերգական նկարագիր մըն է որ կ'երգէ  
Բագրատունին, ապակայն դիւցազներգու-  
թեան ծանր և լուրջ նիւթին անյարմար:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

Շարայարեյի